

սոն: 1956ի Հոկտեմբերին անցած է Հախաճան, Ս. Էջմիածնի Հոգևոր ձեռնարկի իբրեւ սան: 1957ի Ս. Սեփանոսի սոնին Սարգիսը ձեռնադրուած: ձեռնարկի ուսման ժամանակ 1961ին էլ եկած Հալեպ: 1962ի Ապրիլին կ'ընդունուի Երուսաղէմի մեր Ընծայարանի իբրեւ սան, եւ փորձի ժամանակ մը ետք կը դառնայ Միտքան Ս. Արքուդոս եւ աւելի քան մէկ տարւոյ իր կենդանով ցոյց կուտայ համեմատելի անարդիւն ծառայութեան ոգի մը:

ՀՈԳՇ. Տ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐՂ. ԱՂԱՅԵԱՆ
Ծնած է Հալեպ՝ 1940ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հալեպի Սանտակեան Ազգային Վարժարանին մէջ, որը աւարտած է 1956ին եւ անմիջապէս անցած Երուսաղէմ իբրեւ սան ժառանգաւորաց Վարժարանին, որուն ընթացքը աւարտած է 1960ին եւ Սարգիսը ձեռնադրուած Օգոստոս ամսուն: Անկէ ետք հետեւած է Ս. Արքուդոս Ընծայարանի եռամեայ դասընթացներուն:

ՀՈԳՇ. Տ. ՎԱՀԱՆ ԱՐՂ. ԹՕՓԱԼԵԱՆ,
ՀՈԳՇ. Տ. ՏԱԹԵԻ ԱՐՂ. ՂԱՐԻՊԵԱՆ,
Տեսնել կենսագրական գիծերը Սարգիսուհայ ձեռնագրութեան բաժնին մէջ, էջ 215:

ՈՐԲԱՐԻ ՏՇԻԶՈՒԹԻՒՆ

ԴԵՐՇ. ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Ս. ՀՈՐ ԶԵՆԱՐԻ

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի 1962-63 տարեշրջանի Դ. դասարանի չորս ասուներ, յաջողութեամբ աւարտած ըլլալով իրենց ժամանակը, Վարժարանի Հոգե. Տեսչին կողմէ տեղեկագրով մը ներկայացուցան Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, եւ նկատի առնելով անոնց փոքր տարիքները, յարմար դատուեցաւ Ուրաւ շնորհել անոնց, որոցմէ մէկը ժամանակէ մը պատրաստութեան ետք կարենան արժանանալ Սարգիսուհայական ձեռնագրութեան:

Ստորեւ կուտանք անոնց անուններն ու հակիրճ կենսագրականները: —

Տրց. Գրիգոր Մամնեան, ծնած Պէյրութ 1947ին: Նախնական կրթութիւնը առած Տեղույն Մեսրոպեան Ազգային Վարժարանին մէջ, որուն ժամանակը աւարտելէ ետք, 1961ի Օգոստոս 31ին կուգայ Երուսաղէմ եւ յետքէն անոնցմէ կը դառնայ ժառանգ. Վարժարանի Դ. դասարանի սան:

Ս. ՅԱՆՈՒՆ ՆԵՐՍԵՍ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● **ԴՇ. 3 Յուլիս.** — Քարգմանչաց Դաւանապետ Ս. Յակոբ Դաւանապետի Լուսարարացեալ Դեղք: Տ. Հայրիկ Եղբ:

● **ԵՇ. 4 Յուլիս.** — Ս. Քարգմանչաց Վարդապետացն մերոց Սանակայ եւ Մեսրոպայ (Տոնազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց, ըստ սովորութեան, Ս. Քարգմանչաց Երկր. Վարժարանի Տեսչը: Հոգե. Տ. Կիրակ

Տրց. Խաչիկ Երէցեան, ծնած Երուսաղէմ 1946ին: Նախնական կրթութիւնը առած Տեղույն Ս. Քարգմանչաց Վարժարանին մէջ, որուն եւ դասարանի ընթացքը 1959ին աւարտելէ ետք, կրօնաւորելու փափակ մը դառնալով կը մտնէ ժառանգաւորաց Վարժարան եւ կը դառնայ Ա. դասարանի սան:

Տրց. Յարութիւն Թօփալեան, ծնած Պէյրութ 1945ին: Նախնական կրթութիւնը առած Էջեֆիէի Ս. Յակոբ Վարժարանին մէջ, որուն է. դասարանը կ'աւարտէ 1961ին եւ նոյն տարւոյ Օգոս. 31ին Ս. Արքուդոս կուգայ եւ յետքէն անոնցմէ կը դառնայ ժառանգաւորաց Վարժարանի Դ. դասարանի սան:

Տրց. Կարապետ Տոնիկեան, ծնած Երուսաղէմ 1946ին: Նախնական կրթութիւնը առած Տեղույն Ս. Քարգմանչաց Վարժարանին մէջ, որուն Նախապրարանի բաժնի 1960ին յաջողութեամբ աւարտելէ ետք, կրօնաւորելու փափակով կը մտնէ ժառանգ. Վարժարան եւ կը դառնայ Բ. դասարանի սան:

Սոյն չորս ասուներուն հետ Ուրաւ ստացուեալ **Տրց. Տիգրան Սամուրեան,** որ ծնած է Փէյրութի (Ամերիկա) 1934ին. նախնական կրթութիւնը առած է Արլինկըրնի Քրօզի դպրոցին մէջ, ապա երկրորդական ուսումը շարունակած է Լէնկապիլըրնի Գոլէնին մէջ որուն ժամանակը աւարտելէ ետք Պոսթըն Եոնիփէրիքիին մէջ շարունակած է իր համալսարանական ուսումը, որուն ժամանակը աւարտած է 1959ին: Կրօնաւորելու փափակ մը դառնալով 1962 Հոկտեմբերին կուգայ Երուսաղէմ, եւ կը հետեւի հայեւեանի, հայկաբանական եւ Ս. Գրական դասընթացներուն իբրեւ ազատ ուսանող:

վրդ. Գաբրիկեան: Հոգշ. Հայրը խօսեցաւ նաեւ իւր քարոզ մը, յայտնելով թէ Ս. Հոգիին փնտաւարդն ներգործութեամբ էր որ իրաւորութեան Գրեորու Գիւտին և Ս. Գրքի Թարգմանութեան նրաշալի բայց յոյժ գծաւարին աշխատանքները:

● Եր. 6 Յուլիս. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատօնակին:

● Կիր. 7 Յուլիս. — Գիւտ Տիոյ Ս. Աստուածածին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Կուսի գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ վրդ. Մամուր: Երթու գարծի Թափորներուն նախագահեց Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. Քէմհանեան:

● Ուր. 12 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ապա կատարուեցաւ դպրութեան և կիսասարկաւագութեան աստիճաններու տրւութիւնը:

● Եր. 13 Յուլիս. — Ս. Նիկոսասն առաքելոցն Քրիստոսի: Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Արշակ Արդ. Խաչատուրեան: Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ Սարկաւագական ձեռնադրութիւն (տես էջ 214):

● Կիր. 14 Յուլիս. — Բաբելոնցոյ վաղաժողի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաչէ Արդ. Իգնատիոսեան:

● Ուր. 19 Յուլիս. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրեն Արքեպս.:

● Եր. 20 Յուլիս. — Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արդ. Պատուէրեան:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Այլակերպութեան մեծանաղէս նախատօնակին և անոր յաջորդող Տեսնեղորոք գահակալութեան յիշատակի հանգիստութեան: Ապա կատարուեցաւ քահանայական կոչման արարողութիւնը, որմէ ետք Միաբանութիւնը ընդնեցէք զՏէր Հարապետը երգելով բարձրացաւ Պատրիարքարան:

— Իրիկնաղէմին, Մայր Տաճարին մէջ կատարուած Վեկեղէտի և Հովնան կարգերուն նախագահեց Գերշ. Տ. Սուրեն Արքեպս.:

● Կիր. 21 Յուլիս. — ՎԱՌԻՎԱՌ (Այլակերպութիւն Տեսնեղ): Ամեն. Ս. Պատրիարք Հայրը օրուան հանգիստար Ս. Պատարագը մատուցեց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և կուսակրօն քահանայ ձեռնադրեց Ս. Աթոռոյս ընծալարանի չորս սարկաւագները (տես էջ 216):

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Անդաստանին: Իսկ ժամերգու-

թենէն ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կատարեց նորընծաներուն վեղարի տրւութիւնը:

● Բշ. 22 Յուլիս. — Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Յովսէփ վրդ. Մամուր: Ապա, Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. նախագահեց հոգեհանգստեան կարգերուն, պաշտուած նախ Մայր Տաճարին մէջ, ապա Տաճարի Գաւթի և ամենէն ետք Զամ-Թաղի գերեզմանավայրը:

● Գշ. 23 Յուլիս. — Կէսօրէ ետք ժամը 4ին, Ս. Յարութեան Տաճարին ներս կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան բացատիկ Թափոր, Լիբանանէն և Սիւրբայէն ժամանած նորընծայ արեղաներու ընտանեկան պարագաներուն և այլ ուխտաւորաց համար: Թափորի իւրաքանչիւր հանգրուանին, Թափորապետ Հոգշ. Տ. Կիրեղ վրդ. Գաբրիկեան ուխտաւորներուն տուաւ Ս. Տեղեաց վերաբերեալ լուսարանութիւններ:

● Ուր. 26 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս.:

● Եր. 27 Յուլիս. — Ս. Բաղէտի առաքելոցն և Սեղիսոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադրի ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Արդ. Խաչատուրեան:

● Կիր. 28 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կիրեղ վրդ. Գաբրիկեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Բշ. 8 Յուլիս. — Ուստ էլ Գրիթի Ժուրին Երուսաղէմ բերեւելուն առթիւ, Վսեմ. Կառավարչին կողմէ կատարուած բացման հանգիստութեան ներկայ եղան Հոգշ. Տ. Կիրեղ վրդ. Գաբրիկեան և Տիար Կարպիս Հինգլեան:

● Կիր. 14 Յուլիս. — Յրանալի ազգային տօնին առթիւ, Յրանալի ընդհ. Հիւպատոսին կողմէ, Ամպասատոր պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Տիար Կարպիս Հինգլեան:

● Եշ. 18 Յուլիս. — Սպանիոյ ազգային տօնին առթիւ, Սպանիական ընդհ. Հիւպատոսին կողմէ, իրենց Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Տիար Կարպիս Հինգլեան:

● Եր. 20 Յուլիս. — Պեհլիքայի ազգային տօնին առթիւ, Պեհլիքական ընդհ. Հիւպատոսին կողմէ, իրենց Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Տիար Կարպիս Հինգլեան: